2282
L. H. 4.

ԴԺՏՈՒՐԻ ԹԻՒ 876 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 1 ՅՈՒՆՎԱՐ 1879

ԼՐԱՍԵՐ

ՏՆՕՐԷՆ ԽՄԲԱԳԻՐ
Ն Ւ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՆԻԿ. Մ. ԹԻՒԼՊԷՆՏԱՆԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ
Ղալաթիա Բէրլէմպէ Բազար
Իւսի խանի դէմը Սամսար փո-
ղոց թիւ 12

ԱԶԳԱՅԻՆ

ԹԵՐԹԸ 1 ՂՐՇՆ ԹՈՒՂԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՊՂՇ ԲՂՇՈՓԻՄ
Կ. Պոլսոյ համար
Տարեկան ղրշ. 250
Վեցամսեայ » 130
Եռամսեայ » 70
Գաւառաց համար
Տարեկան ղրշ. 330
Վեցամսեայ » 170
Եռամսեայ » 90
Օտար երկիր տարի 40 ֆր.

1879

Ձիշդ տարի մ'է այսօր, որ աւթնամեայ ահագին պատերազմէ մը յետոյ, Օսմանեան բանակներն մեծ մասը գերի գացած և մեկ մասը ցիր ու ցան եղած, սոցա բեկորներէն բազմաթիւ ջրեհատ լաստերով բանակը, Կուրքոյի և Սքօպէլէֆի զօրաց առջէէն, խառն ի խուռն ի փախուստ խուճապելով, թաթար Բազարճըքէն Ջիլիպէ, ասկէ Լարնէ և անտի ալ Զաթալճա կառնէին չունչերնին, մինչ մեկ կողմէն Ռ. Դուռը չուարած հաշուեթեան պատուիրակներ կ'հանէր Բէրլինկրդ, և մեւս կողմէն Ռուսաց յաղթական բանակը, հրաշունչ գետի մը պէս, առը և աւերը սփռելով իր առեւէն, կ'հասնէր Պալքաններուն վրայէն մինչև Ա.յ-Ստէֆանօ, ն. Գլոյ պարապացը տակը, հոս իր հաշուեթեան պայմանները դնելու Բ. Դրան վրայ։

Ձիշդ տարի մ'է այսօր՝ որ Թուրքիա իր վերջին օրհասական ճգնաժամուն մէջ կ'գտնուէր, երբ տարի մ'եաքը՝ անցնելով բոլոր այդ արհաւիրքն ու կործանման վտանգները, այսօր՝ յաղող և բարւոքեալ ապագայ խոստացող ասպարէզ մը բացուած կ'տեսնէ իր առջեւը Թուրքիա, եթէ ասկէ օգուտ քաղելու իմաստութիւնն ունենայ։

Տարին՝ որ անցաւ՝ չորացուք տարի մ'եղաւ Թուրքիոյ, տարին՝ որ այսօր նոր կեանք վերականգնման ու վերածննդեան ակընկալութեամբ ու խոստումներով յղի տարի մ'է։

Ամենէն վերջինը ամացած փոքր ինչ մէկին ամպը, որ Դքրան և Ռուսիոյ միջեւը կնքուեւիք վերջնական դաշնագրին վերայ կ'սաւառնէր, նա' ևս փարատելով, այդ դաշնագիրն ալ թերևս այսօր կամ վաղը կ'կընքուի, և այն ատեն Թուրքիա ուրիշ բան չունենար մտածելու, բայց եթէ իր մտերիմ դաշնակցին՝ Անգղիոյ օգնականութիւնն ու աջակցութիւնը ձեռք ձգելու միջոցներն մինակ։

Հետևաբար Թուրքիոյ ժողովուրդ՝ ամէն հրճուանօք ողջունելու նոր տարին, որ երկրին աղետից ու արհաւրաց վախճանը և բարօրութեան մօտալուտ վերադարձը կաւետէ, թէպետ անցեալ արկածից տխուր և դառն հետևանքները տակաւին մեր վերայէն բոլորովին չեն վերցած։

Իրև Թուրքիոյ ժողովուրդ՝ ըսինք թէ ի՞նչ զգացում կ'ներշնչէին մեզ նոր տարին, այժմ ալ պէտք եմք ըսել համառօտիւ թէ ի՞նչ զգացում կազդէ մեզ իրև Թուրքիացի Հայ։

Ձիշդ ասկէ տարի մ'առաջ, անսահման խնդութեամբ մեծաւմեծ յոյսեր ու ակնկալութիւններ կ'տածէինք, զրս վայելելու պիտի կոչուէր Թուրքիոյ Հայը, երբ այսօր ձեռներն ի գոգ և կորագլուխ՝ իր կրած պատրանքն ու դերև ելած յոյսերը յիշելով՝ դառն հառաչ մը կարձակէ տխրամած սրտին խորէն։

Հայն անցեալ տարի բռնութեանց ու հարստահարութեանց առժամանակեայ դադար մ'ունէր, իր կրած բազմաչարչար առաւպանքներէն վարձատրուելու կայսերական խոստում մ'ունէր, իր ապագայ բարւոքութեան ու վերականգնումը տեսնելու մեծ տէրութեանց վստահութիւնն ու ապահովութիւնն ունէր, և որ ամենէն աւելին է՝ Հայուն օգտին և իրաւանցքհամար աշխատող անձանձիր, անվհատ և աներկիւղ ներքին պատրիարք մ'ունէր։

Մինչդեռ այսօր՝ բռնութեանց ու հարստահարութեանց նորոգ և աւելի սաստկագոյն վերսկսումը կ'տեսնէ իր առաջը՝ հակառակ իր նեղութիւնքն ու հաւատարմութիւնը վարձատրելու կայսերական հաղիսաւոր խոստման, աւելի մեծ ապագայ մը ձեռք ձգելու ակընկալութենէն հրաժեշտ տալով՝ դարձեալ պատերազմէն առջի վիճակին ունենալուն կ'տեսնէ այն անձկանօք, մեծ տէրութեանց տուած մեծամեծ վստահութեանցը փոխարէն՝ այսօր ցուրտ և արհամարհոտ անտարբերութիւն մը կ'տեսնէ, և որ ամենէն ցաւալին է՝ Հայուն այս դառն վիճակն ամրքելու համար իր ներսէս պատրիարքն ալ յուսահատ իր աթոռէն հեռացած կ'տեսնէ։

Ահաւասիկ Թուրքիոյ Հայուն այսօրուան վիճակը, այնքան չլացուցիչ վստահութիւններէ ու ձեռնարկներէ վերջ՝ այսօր անգլուխ և անհովիւ, լքեալ ու անոք, իր ճակատագրին ձգուած ժողովուրդ մը։

Անբացատրելի է և դառն մեր այս վիճակն, այնպէս չէ՞...

Ո՛չ։

Հարուածն՝ որ զաղային ուղղելու կ'ծառայէ՝ չէ պատուհաս և չարիք, այլ չնորհ և բարիք։

Դաս մը ինչքան դառն լինի՝ այնքան օգտաւէտ և փրկարար կ'լլայ։

Անցեալ տարին թէպէտ դառն՝ բայց փրկարար դաս և խրատ մ'է մեզի – եթէ գիտնանք օգուտ քաղել տակէ– թէ տակաւ ազգ մը, որ մեր վիճակին մէջ կ'գտնուի, իր բարւոքումն իրմէն միայն պէտք է յուսայ, և թէ օտարին ու մերձաւորին բարեկամութեանը վրայ յոյս դնելով իր բարիքն անոնցմէ ակնկալելը՝ ունեցածն ալ վերայ տալ է։ Մեծերուն բարեկամութիւնն ու վստահութիւնը պատուհաս մ'է աւելի քան թէ բարիք։

Անցեալ տարուան այս դառն փորձն ու խրատը եթէ չուտ վրայ չհասնէր՝ տակաւին չա՞տ երկար ատեն մեք մեր այդ ցեղերիցը մէկ պիտի դեգերէինք, 78 տարին սրբեց բացաւ մեր աչքը, ուստի և մեզ համար փրկարար տարի մ'եղաւ 78ը, եւ որոյ բարիքն ու արդիւնքը կբերնանք քաղել նոյն իսկ այս 79 տարիէն սկսեալ, եթէ նորէն չը ղոցինք աչքերնիս հեշտաբար երևակայութեանց կրկին ինքզինքնիս մատնելու։

Թէ ի՞նչ պէտք է ընել մեր ազգը իր այս անկեալ և դառն վիճակէն վերականգնելու համար, ինքն իր ձեռօքը և ո՛չ ուրիշին օգնութեամբը։ Ասի հոս մէկ քանի տողով բացատրելիք խնդիր մը չթլլալով, այս պիտի ըլլայ այսուհետև մեր ազգային տեսութեանց նիւթը և մեր ազգային քաղաքականութեան հիմնագիծն ու նպատակակէտը։

Մարդկային ազգին ամենէն մեծ մտածողն, վարժապետն ու առաջնորդը՝ պատմութիւնն է, եթէ այդ ազգն ալ բաւական միտք և խմաստութիւն ունենայ պատմութենէն օգուտ քաղելու։

Անցեալը պատմական դասն է մեզ համար, եթէ ունենանք միտք զայդ հասկնալու։

Անցեալ տարին կրաւստ չէ մեզ համար, այլ շահուած ժամանակ մը, պէտք չէ անիծենք, այլ յարգը գիտնանք, անցեալ տարին մեզ բնաջինջ չբրաւ, այլ դեռ կամք ու կ'ճամբ թէպէտ այս վիճակին մէջ, բայց դարձեալ փառք աստուծ ենք ըլ օ-

տարին վրայ դրած յոյսերնիս զմեզ ամէն աւելի աղեսից չը մատնեց։

Լեհացիք իրենց ապագայ յոյսը օտարին (Դաղլիոյ) վրայ դրին և ոչնչացան։

Հունգարացիք իրենց ապագայ յոյսը իրենց վրայ միայն դրին և թագաւորութիւնին վերահաստատեցին։

Ի՞նչ ըրին։

Պատմութիւնը կեցած է հոն ուսուցանելու և ցոյց տալու։

Մարդկային ազգին ամենէն մեծ վարժապետն ու ժամանակը՝ պատմութիւնն է, և ամենէն մեծ երջանկութեան միջոցը՝ ինքնօգնութիւնը։

Ցուսահատելու ժամանակը չէ, սերտենք պատմութիւնը, ուսանինք ազգաց արարքը և անցելոյն օրինակէն օգտիլ ուխտելով, թեւակոխենք նոր տարին։

Եւ Հայը փրկուած է։

ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՏԱՐԻ

Ժամանակի անդուլ պիսիթոնը ահա տարի մ'ալ ոչնչացընելով յաւիտենականութեան անհուն ու մթին գոգն կ'յղէ, 1878 տարին է ջայն, որ բազմատեսակ թշուառութեանց խաւերով հիւսուած՝ այնքան քըստմընելի եղաւ, և որ տակաւին կ'յուզէ ցնորս բաղմաթիւ սըրտերու։

Երթաս բարեաւ տարի արհաւրոց, փոթորկաց, յեղափոխութեանց, որ ոտից անջնջելի հետքեր թողուցիր աշխարհի վերայ և տարեգրոց մէջ անմոռանալի յիշատակներ բարդեցիր։ Քանի օ՜ն մռայլամած էր ծագումդ և քանի՛ արհաւրալից եղաւ վերջալոյդ։ Ծածկուե՛ ապա անցելոյն գերեզմանին մէջ, անագորոյն ուրուականն, զոր դիպած չեղջ չեղջ մխրճոյն վերայէն՝ յոյս ի սիրտ՝ ոգևն կ'մրմնջեմ աստէն տարուոյն նորածագ որ գողցեալ բարեբաստ ճակատագրով մ'է յղի, իսկ թէ այն ալ իբրեւ քեզ չանթից ամպրոպ մ'ունի իր ծոցն՝ յաւիտենական անէ՛ծք է իր բաժին։

Ահա՝ նոր օր կ'ծագի —ոզջո՛յն քեզ, օ՛ր յուսազուարթ, որ նորէկ տարուոյն Կարապետն ես— և ինչ սրատրաբուխ տեսարաններ կ'պարզին չուրջանակի, երկրի զանազան խորշերէ հըրճուանաց, աւիւններ կ'կրկնեն, խօլ մանկունք ճչելով կ'կայծռեն հոյլ ի հոյլ, և չափահասք զարդարուն խրախճանաց մէջ դիրեար կ'ողջագուրեն և կ'բաժակահարեն ուրախագին աղաղակք... այլ ի բաց խառնա-

չքփոթ ժխորք, հարկ է դէթ մի վայրիկ խոկալ իրրև մահկանացու, խոկալ և դիտուն ակնարկ մի դարձնել յետկոյս՝ ուր անդանօր ահաւոր տեսարանները կ'սքօղին համատարած մառախուղի մէջ, թողունք աստ քաղաքական նշանաւոր պատահարները՝ ոյք դիւանագիտաց ղարմանքը գրաւեցին, թողումք պատերազմական անմոռանալի ընդհարումները՝ ոյք այնքան աղէտք կուտեցին ընդհանուր Ցաճկաստանի վերայ, ոյք չինովի քաղաքակրթութեան կուռքերն քանդեցին և հազիւ վերջացաւ ժողովրդեան ամենօրեայ զբաղմանց վերայ նաև բարդելով հացի կենսական ինդիրը, թողումք աստ նաև բնական ահեղ պատուհասները՝ ինչպես մերթ տեղի ունեցած դեռնաշարժներն և գետ. 6ի փոթորիկը։ Աստ մանաւորեմք մեր դիտումներն որ չճապաղին ուրոյն ուրոյն։ Ակնարկ մի յետղաշրջեմք Արեւելս կոյս, այն դարաւոր վիճակաց վերայ՝ ոյք անցեալ փառաց նշոյլն ունին ցարդ քնք. ազօտ, Հոն մի սքրտայոյզ տեսարան կ'պարզի ակներև՝ ուստի կ'զարհուրի զգայուն ոգին, կ'տեսնէ՛ք սրախողխող դիականց դէզերն, արեան հեղեղներու թաւալգըլոր հոսումն, կ'լսէ՛ք մահաբերձ կարեվիրաց հռնչիւններն, որդեկորոյս ծնողաց կսկծերն, այրեաց ողբերն և սովալլուկ հիքին օրհասական խաշտանգիչ ճգունքն, կ'լսէ՛ք նաև Մարաչի գեռնափոր խորչերէն, սրտաբեկ հեծութիւններն, ո՛չ ապաքէն նոքա մեր ազգն, մեր արիւնն, մեր եղբայրներն են, որ չփոթ քաղաքականութեան մի զոհ գացին... ափսո՛ս, պատերազմին հրէշն խնկարկուներ գտաւ նաև իններտասաներորդ դարու մէջ՝ որ իմաստնացեալ թուէր նախկին 70 դարուց փորձառութեան դառն դասերովն, ասի ապագայից արդահատանքն ոչ նուազ նպատի գրգռէ։

Երկու մեծազօր ազգեր, բազդերնին իւսար յետացած, ասպարէզ իջան սպառազէն զիրար բզկտելու, և յուսաբեկ Հայն, որ քաղաքական՝ մրրկոտ աշխարհէն ի վաղուց արտասահմանի՝ վիպասփռական նորոգ կեանք մի կ'սկսէր և մտաւորական ոհեղ ցնծալութիւններով գաղափարաց ցոլումն կ'արտափայլէր, յանկարծ սուրի շողիւնն ոչմայրեց իւր ճակտի վերև և մաղեըրն ցցուեցան, Տարոսի չուրջը՝ մթին ու աւեր արեամբ կարմիր ներկեց։ Դասալիք ղօրք՝ քրդեր՝ Չէրքէզներ, կուսակալաց մլեւանդն զի-

տութիւնէն խրախուսելով՝ կաբահիները կողոպտեցին, բնակարանները քանդեցին և որ աւելի զարհուրելին է՝ սրբավայրներն պղծեցին, ամօթլուած կոյսեր առևանգեցին, փեսայն իր հարսի դէմ որախողխող սպանեցին՝ առանց անսալու արտասուագին պաղատանաց, եբախայմօր վզէն անջատեցին առանց ունկն դնելու պաղատագին ողբոցանաց, կրճիմն յարուցին անձնիւր կենաց դէմ և վերջապէս նորոդ ոգեճմլիկ պատկերներ յերիւրեցին Մասեաց սառոյտն, մինչ զի մեր տառապալ եղբարք՝ այլ ևս տակալու անկար՝ գաղթականութեան տխուր փորձին ձեռնարկեցին, այսու աւելի վատթարացեալ իւրեանց վիճակ, բնաւնեկան յարկի անդորրէն կորուսին, և չալ ևս կեանքի յոյսէն դժդոհ՝ աստանդական և ճըկուն՝ իւրեանց մլեզին աչեր մահու փոսն բեւեռեցին, հոն, հոն միայն տառապելոց հանգիստ որոնելով։

Արդարև 1878 տարին սրտմտօրէից և միանգամայն նըշանաւոր ոչ նուազ էջեր գրաւեց ազգ. տարեգրոց մէջ։ 5 տխրատես դարերէ ի վեր գերի Հայն հաղիւ մի քանի անգամ ևէթ հարստահարութեանց բաղդին մէջ [illegible] գուած էր։ Ա՛յո՛ 1878 տարին մերթ չանթ էր անագորոյն՝ սըրտերու դէմ և մերթ հողմիկ գարնանային։ Մի՞ կ'յուսար որ Ասիական դանդաղութեան տակ սարկացեալ և կանացի ոզբերով զբաղեալ Հայն՝ եւրոպական քաղաքականութեան շղուն ասպարէզի մէջ մի հսկայ քայլ պիտի առնու, անքնդհատ պիտի յիշուի, իւր փառասէր անցեալն պիտի նկատուի և ներկային մէջ օգնութեան խոստումներ պիտի վայելէ։

Մինչ պարտեալն Ցաճկաստան եւրոպական մեծ Տէրութեանց ակնարկն յինքն կ'հրաւիրէր և դիւանագէտ պետականք միահոգին ի Պերլին կը դիմէին՝ հոն Եւրոպիոյ և Ասիոյ կարևոր մի մասին և յայսմ բնակեալ զանազան ազգ է և կրօնքէ ժողովրդոց ճակատագրին մեծ ինդիրը լուծելու, անդրէն Հայ պատուիրակներ եղան Հայ պատուիրակները եւրեւցան յԵւրոպայ որ բարձրաստիճան պաշտօնականաց հիւրընկալութիւնն վայելելով համարումն կ'գրաւէին, մանաւոր հանդէսներու մէջ «Հայ» անունն կ'յիշեցնէին, անոր անցեալն կ'յուշադրէին, եւրոպական տագնդաւոր թերթերու մէջ մեծ էջեր կ'գրաւէին ներբողներով լի, և այսպէս ականատես անձանց ակնարկն

կ'հրաւիրէին յԱրեւելս կոյս՝ ուր Հայաստան կ'սպայ վաղափուլ աւերակներուն և ուր հեգ խուժանն՝ ճիշդ ինկուն կ'անճիտուի։ Եւ այսու նաև այն պատգամաւորք «Հայ» անունն յիշատակեցին այն թղթին վերայ, որ ազգաց ճակատագրին կը տնօրինէր։ Այն թուղթն իրը 61րդ յօդուածովն Հայուն կեանց և ընչից ապահովութիւնն կ'տրամադրէր նաև, և այս եթէ կատարուէր՝ ոչ ապաքէն ծայրահեղ բարիք մ'էր մեզ համար, բայց ափսո՛ս, նորա խուն ինչ կիրառութիւնն չըտեսանք ցարդ և այսու անօգուտ և անխոհական դատեցինք ազգասիրաց ամէն ճգունքն և սկսանք մեր ապագայն քամահրել։ Զարմանալի՛ է տեսնել որ դեռ դաշնադրութեանց տրամադրած բարւոքումներն չողջունեցին զԱսիա, մինչ հաղիւ նոցա մանրամասնութիւնք կիրառութիւն գտած է Եւրոպիոյ մէջ։

Սակայն ո՞ կարող է՝ լալու ողբալու իրաւունքն կորզել ի մէնջ՝ այն մեռազնէից վերայ, որ աւերց տակ թաղուեցան, մանկանց վերայ որ որբ մնացին, մարց վերայ որ այրի և որդեղիրկ մնացին, չնկնող կոյսերու վերայ որ գաղանային կըռիսոց առ դատին, անպարտ կալանաւորաց վերայ որ բանտերու արհաւրաց մատնուեցան և հուսկ ուրեմն այն ժողովրդեան վերայ՝ ոյր չուրջ միշտ անյուսութե՜ն վհեր։

Խորին յեղաշրջմանց տեղի տալէ յետոյ, այսպէս հրաժեշտ կուտայ 1878 տարին և ներոյն սեմոցք վերայ քաղաքական և ազգային կնճռոտ խնդիրներ կ'սպասեն ազգաց ուշն գրաւելու, և է՛ր թէ բարւոք լուծումն գտնէին և աչխարհի ճակատագրին նորոգ վերափայլէր։

Կ. Խօսքանց

1879 յունվ. 1

Ս. Պետրիարքին, իւր հրաժարականը վերստին Բ. Դուռը ղրկելուն վրայ, մեծ եպարգոս խայբետին բաշա յատուկ գըրութեամբ հրաւիրեր էր զՊետրիարքն այս ըչ. որ երթալ իրեն հետ տեսակցութիւն մ'ընելու։

Հետեւաբար Ն. Սրբազնութիւնը այսօր մեծ եպարգոսին պիտի երթայ տեսակցութեան։

Ընդհ. Ժողովոյ վերջին նիստին արարքը գրած տեղեկագիրը հաստատած կինք յիշատակել թէ, Ց. Նուրեան, Թադէոս Թերխան և Գազազեան Յակոբ էֆենտիներ երեսփոխանութենէ հրաժարած ըլլալով, հրաժարականին ընդունելութեան։

Նոյնպէս Ֆ. Միսաքեան էֆ. և Մարկոսեան Գրիգոր էֆ. եղբոց բացակայութեան, և վերջին հրաւիրագրին ալ պատասխանած չըլլալուն համար, երեսփոխանութենէ հրաժարեալ համարուեցան։

Վանայ գաւառէն երեսփոխան ընտրուած Ազարեկեան Մարկոս էֆ.ի ընտրութիւնը, քնարական օրինաց համեմատ վաւերուած չըլլալուն համար, անվաւեր հրատարակուեցաւ, և Օրթագիւղի 3 նոր երեսփոխանաց ընտրութիւնը վաւերացաւ։

Հիւանդանոցի պատուարժան Հոգաբարձութիւնը, այս չբոր Ղալաթիոյ մատենադարանը՝ նոր կազմած յանձնաժողովոյ անդամոց հետ նիստ մ'ըրաւ՝ նպաստ փրկելի Հիւանդանոցին տրուելիք պարահանդիսին նախապատրաստական կարգադրութիւններն ընելու։ Կ'կարծեմք գիտնալ թէ պարահանդեսը Ութօրեկից յոյսերդ չաբթուան մէջ տեղի պիտի ունենալ որոշուեր է։

ՊԱՏԿԵՐ

ՀԱՅԿԱԶ ՎԱՐԴԱՆԱԶ

ԴԱՒԻԹ ՎԱՀԱՆԱԶ

ԵՒ

ՀԱԶ ԹԱԴՈՒՀԱԶ

Ըստ [illegible] տուելու և թէ սրահները զարդարելու համար կը վճռառի խիստ դիւրագին վ. ց. Մարգարեանի գրատունը Մերճան—Զարշըբաչ թիւ 57

ՀԵՌԱԳՐԱԼՕՒԹԻՒՆ

Լոնտրա 10 յունվ.

Բօպերթս զօրապետը, լսելով որ Մօնկօլներն յարձակումի մը կապատրաստին, մտադիր է նոյն գէպ'ի Զօրում վերադառնալ այժմ յոյժ ցիր ու ցան կեցող անգլ. զօրքերն հանհամախըմբելու։

Կուէթթայէն այսօր հասած հեռագիր մը կըսէ թէ, վաւերական տեղեկագրոյ նայելով, Աֆզալ խան՝ իւր զօրաց փախստեանը վրայ, ինչպէս ալ թշդլով մեկներ է Դանտահարէն, ուրկէ մեկ աւուր ճամբայ միայն հեռի կ'գտնուի Սթուարտ զօրապետը 9 յնվ.

Տէյլի-Թելէկրաֆ կ'ծանուցանէ թէ Բօպերթս զօրապետը առանց սեհ, քնդդիմութեան, Աֆղանիստանի խօսքի նահանգին գլխաւոր քաղաքը դրաւեր է։

Ռարիզ 10 յունվ.

Գաղղիոյ մինչեւ երկիրներուն մէջ (հաւանականաբար Լուբց աղղայծներէն) երկաթուղեայ երթեւեկութիւնները դրեթէ բոլորովին դադրած են։

Ա. յս առաւօտ հասած

Բարիզ 11։—Գաղղիոյ պաշտօնէութեան նոր ծրագրած քաղաքականութեան հիմնագրին համեմատ, Քօմիւնի յեղափոխութեան մէջ մեղսակցութիւնունեցողներուն նկատմամբ, մինչեւ ատիճան մը ներողամտութիւն ցոյց տրուելով պատիժին թեթեւցնելարժան տեսնուեր է թէպէտ, իսկ առ այժմ քնդհանուր ներողութիւն հրատարակել չէ առաջադրուած։

Ցիշեալ ծրագրին համեմատ, Հանրապետութեան կուսակից դտնուղ զօրապետաց՝ մեծ հրամանատարութիւններ պիտի յանձնուին, դատաւորական պաշտօնավարաց մէջ կարեւոր փոփոխութիւններ պիտի լինին, և կղերական ազդեցութեան քանդարձակմանը դէմ կեցած օրէնքները լիովին գործադրութեան պիտի դրուին։

Անցեալ մայիս 16ին կազմեալ պաշտօնէութեան արարքը քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովը՝ հիշեալ պաշտօնէութիւնը դատաստանի տակ ձգել որոշեց։

Բէթէրսպուրկ 10։—Ա.ժանս Րիւս Թերթը կըսէ թէ, Լիրատնանու կառավարիչ Րիսթեմ բաշա թէպէտ արժանաւորութիւն ունի Արեւելեան Րումելիի կուսակալ ըլլալու, բայց Րիսթեմ բաշա կրօնքով կաթոլիկ է, մինչդեռ Արեւելեան Րումելիի բնակչաց ամենքն ալ յունադաւան են։

Կալկութա 11։—Զրոյցներ լսուելուն վրայ թէ Մօնկօլներն անդղնացուց վրայ յարձակելու կ'պատրաստուին, Բօղերթս զօրապետը իր ամբողջ զօրութիւնը Գօրումի կողմը հաւաքելու վրայ է։

ԴՐԱՄԱԿԱՆ

Ա.յսօր Տարեգլոյ առթիւ Ղալաթիոյ Պօրսան գոց է, թղթատարը հրապարակէն վրայ այսօր 450 կընէ։

Պանքային ձէզայերլի խանի բաժնեճիւղը գոց է այսօր

ԱՅԼԵՒԱՅԼ

Ռուսական բանակէն 3 բանակ Պուլկարի մէջ մեռած գտնուելը են անցեալ շաբթու։ Մանրախոյզ քննութենէ մը վերջը հաստցուելը է թէ, ասոնք խաղաղաբար մը դարս եղնելով, ուր մեծագումար ստակ կորսուեր էին, իրար սպաններ են։

—Ջմեռը, որ այս տարի չատ թեթեւ անցնելու վրայ է ետրս. պային հարաւային կողմերը, կը թուի թէ հիւսիսային եւրոպայի մէջ խիստ սաստիկ եղած է. այս տարի Սկովտիոյ մէջ դկտմբ վերջերը այնքան առատ ձիւն է եկեր որ տեղ տեղ մինչեւ 3 մէթրօ բարձրութեան կ'հասնի։ Դկտմ. 23ին երկաթուղեայ 14 կառախումբ թաղուեր է ձիւներուն տակը այն կողմերը։ Այն աստիճան սոսկալի փոթորիկներ ալ եղեր են՝ որ հազարաւոր թռչուններ մեռած վար իյնկեր են։ Հազարաւոր ոչխար ցրտէն մեռնելու վրայ են։

Պելճիգայի մէջ ալ դկտմ. 13/25ին Բէրվէզ քաղքին մօտ՝ ղօրաց գումարտակ մը ձիւնէրէն պաշարուելով, 100 հոգիէ բաղկացեալ ղօրախումբ մը ղբրկուեր է օգնութեան որ ճանբայ բանալով աղատեն զումարտակը։ Նմանապէս երկաթուղեայ կառախումբ մ'ալ ճանբայ չգտնելով քանի մը ժամ այնպէս մնացեր է։

Նօրմանտիոյ մէջ և ուրիշ տեղեր ալ ահագին ձեան հիւսեր բլդելով 250 մէթրէն աւելի տեղեր ծածկեր են։ Թաղալին դպրոցէ մ'արձակուող 52 տղայք երեկոյին՝ սառած լճակի մը վրայ սահելով զբօսնելու ատեն, սառոյցը յանկարծ կտրելով 48 տղայք մեկէն սառոյցին տակն անցնելով անհետացեր են, 4ը միայն ազատեր են, որոնք վախնալով սահելու խաղին մէջ չէին մտած։

Վրիպակ.—Շբ. աւուր թերթերնուս Բարիզ 9 թիւ երկրորդ հեռագրին մէջ. «Թունուզի պէյը նթէ Գաղղիոյ գիջումն չընէ այսօր...» խօսքը պէտք է կարդացուի «Թունուզի պէյը նթէ Գաղղիոյ գիջումն չընէ այսօր...»։

ՎՆՏՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեծ եպարգոսն այս գիշեր եբլուղի պալատն հրաւիրուելով, կարեւոր խնդրոց վրայ 3 ժամու չափ խորհրդակցութիւն մ'ունեցեր է վեհ. Սուլթանին հետ։

—Գաղղիոյ դեսպանն վաղն երեկոյ, Անգղիոյ դեսպանն ալ դշ. երեկոյ մեկ մեկ շքեղ կոչնդքներ պիտի տան Բ. Դրան նախարարաց և օտար դեսպաններուն։

—Ռուսաց դեսպանատունը շբ. գիշեր տրուած պարահանդեսը խիստ շքեղ ու փառաւոր եղաւ, տպատեններու և ուիկնայց բազմութիւն մը ներկայ կ'գտնուեր. պարը մինչեւ առաւօտ տեւեց գրեթէ, որմէ եաքը ֆօթիլեօն անուն զուարճապարն ալ տեղի ունեցեր, եւ գերմ. դեսպանն անգամ քիչ մը պարեր է։ Առաւօտեան դէմ շքեղ նախաճաշ մը պատրաստուածէր։

Մեծ եպարգոսն և Արտքդործ. պաշտօնեայ Գարաթէօտորի բաշա՝ կանուխ գալով կանուխ ալ մեկներ էին, իսկ մինչեւ առաւօտ հոն մնացին Մալվա բէյ. Գեանի բէյ. Մինղիճ էֆ. և այլ բարձր աստիճանաւորք։

Մայրաքաղաքիս երեւելիներէն ալ ամեն աղդէ բազմութիւն անձինք կային, քնդ որս նշուեան Մինհրան պէյ, Պլսք. պէյ և այլն։

Թօփլէպէն զօրապետն եւ Սքօպելէֆ զօրավարն, ղրաղմանց պատճառաւ, պարահանդէսին ներկայ չկարենալ ղբտնուելնին հեռագրաբար ծանուցեր էին։

—Վաղը կ'հաւատայ թէ Թուրքիոյ մաքսատրոց վարչութիւնը եւրոպացիներէ կազմեալ քննկերութեան մը յանձնելու համար Սըր Լէյարտի բրած առաջարկութեանը՝ կարեւորութիւն տալով Դուռը, գայն ընդկատողութեան առեր է։

—Խալիլ Շերիֆ բաշա երէկ առաւօտ ժամը 12ին մեռաւ։

—Շբ. երեկոյ Ֆիլիպէէն Լոտրնէ եկող երկաթուղեայ կառախումբը՝ Մերիճ գետին վրայի կամուրջներուն մէկէն անցած ատեն, կամուրջը յանկարծ իյնելով, 3 վակօն գետին մէջ կիյնան։ 280ի չափ անձանց կոչուած կայ կըսուի։ Կ'հաւատան թէ՝ հիշեալ կառախումբը Ռուսաց եւ յատկապէս վարձուած զինուորական կառախումբ մն է եղեր։

—Ձէզայերլի խանի գրասենեակները 400 դշ. քայմէի փոխարէն 1 ոսկի տուրիլ սկսելէն ի վեր, չատեր կարդի թողանքչան առնելը՝ իրենց օրական չահուն մէկց մ'ըրած էին, թղուանչանն առնելով ու տանելով սարրաֆներուն գայն 20. 50 եւ մինչեւ 150-200 դ.ի ծախելով։

Պանգան բրս չհատիտուածեան վերջ տալու համար, չորրորդ սկսեալ թուանշան տըուեր է մինակ այն անձանց՝ որոց ձեռքը փոխանակելու քայմէ կ'գտնուի։ Ասով հանդերձ գրասենեակները ժամը 5ին բացուելով հաղիւ քառորդ ժամու չափ թուղթ փոխանակելէն յետոյ, գոցուեր են, և կանանց ձեռքի քայմեներն մինակ փոխուելով, այր մարդոցմէ բնաւ քայմէ չէ առնուեր։

Կ'հաւատան թէ ուրբաթ օր ձէզայերլի խանի առաջը խառնուած բազմութեան մէջ, տաճիկ մը մեռեր է բարեկարգութիւնը պահպանելու համար բերուած արաբ զինուորաց մէկուն հրացանին բունէն հարուածոյը տակ, և 12ի չափ անձինք ալ ծանր կամ թեթեւ կերպիւ վիրաւորուեր են։

—Աթիական բարեներոգմանց վրայօք Սըր Լէյարտի և Սալիզպըրի մարգիզին միջև բանակցութիւնք կ'ընթանան, որոյ մէկ մասը թարմ իր յունվ. 4 թերթին մէջ կ'հրատարակէ։

—Ա. եւ Ելեան Րումելիի յանձնաժողովոյ անդամ վեհմ. Ապրօ Ս. էֆ. որ անցեալներն յատուկ պաշտօնով մայրաքաղաքս եկած էր, անցեալ շաբթու նաբէն Ֆիլիպէ վերադարձաւ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԳՈՎՓԱՍՏՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒ

Ընդհանուր Հոգաբարձութեան

Ս. Յակոբեան Ազգային Դպրոցին համար պիտի հիմնուի Ս. Ղազարու Վարժարանին մէջ մասնաւոր դասարան մը, ուր 1878 թուականին ծնած տղաքը պիտի ընդունուին։ Այդ դասարանին մէջ պիտի սորվեցուին հետեւեալ առարկաները։

Ա. Հայկական լեզուն։ — Բ. Թուաբանութիւն։ — Գ. Աշխարհագրութիւն։ — Դ. Պատմութիւն։ — Ե. Աստուածաբանութիւն։ — Զ. Գրչագրութիւն։ — Է. Ձայնագրութիւն։ — Ը. Ծանօթութիւն Եւրոպական լեզուներու։

Ուսման տեւողութիւնը 3 տարի է։ Ուսման վարձքը տարեկան 100 ոսկի։ Ուսման վարձքը կրնայ վճարուիլ երեք անգամ, այսինքն՝ առաջին տարուան համար 40 ոսկի, իսկ միւս տարիներուն համար 30 ոսկի։